

Յետ հանելոյ դժտիս ի մտից մնաց ի  
դրամարկեղ Աղքատանոցին առ 1ն Յուն-

57,207 75

վարի 1881 ամի տոկոսաբեր թղթալք  
Առ ձեռն պատրաստի դրամք ընդ  
անօրէնու թեամբ կտակահատարաց Քաս-

482 45

պարեանի վասն ծածկելոյ դժտիս հի-  
ւանդանոցի

57,690 20 57,690 20

Ընդամենն

3. Յառաջարկելի հաշուեցուցակն հանդերձ տոկոսաբեր թըղ-  
թովք Աղքատանոցի եւ պատշաճաւոր վկայաթղթովք ի վերայ  
հիման 10:7 100. կանոնադրութեան յաղագս կառավարութեան  
տան Աղքատանոցի առաջի արարեալ եղեւ վասն գննութեան  
ընդհանուր ժողովոյն Հասարակութեան Հայոց Մոսկուայի որ  
յետ գննութեան եւ ստուգելոյ զհաշիւն ի ձեռն ընտրեալ երկց  
անձանց՝ որ ի ժողովոյն, եգիտ զայն ուղիղ եւ համաձայն ընդ-  
վկայաթղթոց. իսկ դրամագլուխք Աղքատանոցին են առ ձեռն  
պատրաստք, դորմէ եւ մուծաւ յարձանագրութիւն ընդհանուր  
ժողովոյն: Եւ 4. Յետ աւարաման սահմանեալ կանոնօք ժամա-  
նակի վասն պարագմանց ի Խորհրդարանի Աղքատանոցին Ան-  
գամոյ նորին պատուաւոր քաղաքացի Մ Կ. Փանեանց, Խորհր-  
դարանն խնդրեաց ի հասարակութենէ ընտրել ի տեղի հրա-  
ժարեալ Անդամոյ զայլ ոք, եւ ժողովն եւ հասարակութիւնն  
միաձայն ընտրեցին նորոգ զՓանեանց, որ եւ շարունակէ զիւր  
պարագմունս յԱղքատանոցի:

ՀԵՔԵԱԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Ո՛վ որ փոքր ի շատէ ծանօթ է Հայերի գիւղական կեանքին, նա  
անշուշտ տեսած կլինի թէ՛ ինչպէս հայ գիւղացիք մանաւանդ ձը-  
մերան երկար զիշերները իւրեանց յօգաններում\* ) հաւաքուած՝ ան-  
մեղ , պարզ , ու զուարճալի ժամեր են անցուցանում , հանդիսապէս  
պատմելով միմեանց իւրեանց հայրերից ու պապերից անզիր սո-  
վորած զանազան զրոյցներ, երգեր ու վէպեր. սոցանից ոմանք, որ-

(\*) Գոմի մի առանձին մասն թաղիքով կամ փսիաթով ծածկուած) որը գիւղացոց համար ծառայումէ իբրև հասարակաց պատուաւոր ժո-  
ղովատեղի:

քան և առասպելական ձև ու դարձուածներ ունենային, այնուամենայնիւ պարունակումեն իւրեանց մէջ նախնական ժամանակներում կատարուած իրողութիւններ, որոնք վերաբերումեն կամ Հայ պատմութեան Հեթանոսական շրջաններին և կամ քրիստոնէութեան ժամանակի սկզբներին, երբ սովոր էին ժողովրդեան անդիր օրատմաները ու երգիչները իրանց ամեն մի զրոյցներն ու երգերը այլաբանօրէն պատմել, խառնելով նոցա հետ և հեթանոսական կեանքի սովորութիւններից ու պատկերներից: Այսպիսի ժողովրդական զրոյցներն ու վէպերը, որոնք, ինչպէս վերը ասացի, բերանացի աւանդութեամբ հասած են մինչև մեր օրերը, որչափ և ազուլուած լինին, որչափ որ հետացած լինին իւրեանց իրական պարտութիւնից, այնու ամենայնիւ պատմական մեծ նշանակութիւն ունին ներկայ բանասէրների՝ վիպասանների և պատմաբանների աչքում. պատմաբաններրազննին և սրասես աչքերը թափանցելով այդ զրոյցների և վէպերի մէջ նկարագրած կեանքի տիպերի և պատմութեան ձևերի ու դարձուածների խորքերը, կարող են նկատել նորանցում հայ ժողովրդի անցեալը, հայի հասարակական հակումները, ձրգառումները, նորա բնական և բարոյական ուժի կշիռն ու աստիճանը:

Այս տեսակ զրոյցներիցն ու վէպերիցն է և Պ. Տ. Ասուասարգեանցի ժողոված «Էթեմալները»: որոնք մեծ ներդրութեամբ զանազան հայ գաւառներ և զիւզեր ծանապարհորդելով հաւաքել է հայ զիւզացիների բերաններից: Աթէ սորանցում երևումեն մի քանի Պարսկական և Երարական կեանքի տիպեր և պատմութեան ձևեր ու դարձուածներ, այդ պէտք է վերաբերել հայերի երկար ժամանակ նոյն ցեղերի հետ մի և նոյն կեանքի հանդամանքների տակ ապրելուն, որոյ ազդեցութեանը ենթարկվումէին առ հասարակ նոցա հետ ապրող ամեն արևելեան ազգերը: Բայց և այնպէս յուսալով որ՝ սոյն «Էթեմալները» թէ Երարատիս գիւղական ընթերցողներին կընծայեն անմեղ զրօտանք և թէ ազգիս բանասէրներին կընծայեն Ազգիս անցեալ կեանքին վերաբերեալ մի տեսակ հետաքրքրական նիւթ, յարժար համարեցինք հետզհետէ հրատարակել Երարատի մէջ սոյն ամսաաւետիկն սկսեալ իրրե ԹԵՄԹՈՂ, առ անձին համարներով: